

Գուրա դադած լրագրաց ճանխու
ծախքը խմբագրութեան վրայ է։
Լրագրաց պերբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պժ.
Լիւ, Չինիլի խան։ Մասիսի գրասենե-
կակալ։

Ճամբու ծախքը Հիմարուած նիւծ
մակ չընդունուիր։

1894

Երեսուխի թէ քանի մը մարդիկ վերջ
լատակաց ներքև մնալով մեռեր են,
չատեր ալ վիրաւորուեր են:

Երբեմն Կ. Պօլսոյ առևտրական դատարանին անդամ Մեծ. Մինաս Էֆենտի Թօգաթլեան Չանազ—Պալէի առևտրական դատարանին նախագահ անուանեցաւ :

Պօսնայի լրագիրը կը ծանուցանէ թէ Եֆենտի—Պաղարի նախագահին մէջ մայիսի սկիզբէն 'ի վեր անձրեւն ու ձիւնը կը շարունակէ , որով բազում գաւառներ Զորդուեր են և պարտէզներն ալ մեծ վնաս կրեց են :

Ագրիանուպօլսոյ լրագիրն հետեւեալ տարօրինակ դէպքը կը պատմէ : «Լիզաֆի քարտուղար Սառաթլեան Էֆենտիին քանի մ'օրէ 'ի վեր Կ. Պօլսէն օգտախօսութեան եկած էր հոս իր կնոջ հետ. վերջին օրերս յիշեալ պաշտօնատարը գինով ըլլալով կնոջը վրայ ինկաւ և քիթը խածնելով բըրցուց կերաւ » :

«Այս իրողութիւնն եղեւնադատատեանին առջև ստուգուած է » :

Յունաց թիւրօս լրագիրն անօրէն Պ. Բիթօնիտէս, անցեալները խեղդուած յոյն տղիկին առթիւ ըրած հրապարակութեանց մէջ ըսած ըլլալով թէ ինք իր աչքով տեսեր է որ տըղուն աչքը փորուած , լեզուն կարըւած , եղունգներն հանուած և մարմինը ծակծկած էր , ոստիկանութեան ձեռք բանտարկուելէ ետեւ ' չորեքշաբթի օրը պատժական տեսին առջև հրապարակաւ դատուեցաւ :

Ոստիկանութեան դրան թարգման Արիսթիտէս Էֆենտիին դատախազի պաշտօն կը կատարէր :

Ատեանը ' թոյլ չտալով թիւրօսի անօրէնին որ փաստաբան մը փոխանորդ կարգէ իրեն , որովհետեւ նախագահն յայտարարեց թէ օրէնքը յանցանք կամ ոճրագործութեամբ ամբաստանեալ անձանց համար իրաւունք չտար փաստաբան կամ փոխանորդ կարգելու , թիւրօսի անօրէն

ներն անձամբ պատասխանեց իր վրայ եղած ամբաստանութեանց : Նախագահն հարցուց ամբաստանելոյն թէ կրնայ երկու վրայ ցուցնել որք իր հրատարակած իրողութիւնները հաստատուն : Ամբաստանեալը «ոչ» պատասխանեց : Նախագահն հարցուց դարձեալ թէ կրնայ բժշկաց վրէպաթիւնը առտ հանել :—Ասոր ալ «ոչ» պատասխանեց ամբաստանեալը :—Ուրեմն , յարեց նախագահը , եթէ բժշկաց վրէպաթիւնը ճշմարիտ է , ձեռքդ սուտ պէտք է ըլլայ :—«Հարկաւ» պատասխանեց ամբաստանեալը :

Այս պատասխանին վրայ տուեալը գործելով ամբաստանեալը դարձեալ բանտարկեցաւ :

Լրագրոյ մամուլը գրուած ժամանակ կիմանանք թէ կայսերական հրամանաւ ' նախկին Շէյխ իւլ խալմաթը հասան Գէհմի Էֆենտիին : վերջոյն Շէյխ իւլ խալմաթն ունեցէ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԵՍՋԱՍԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ			
Յ յուլիս ուրաթ իրիկուն	49	2	
Յ յուլիս շաբաթ առաւօտ	49	3	
Բացուեցաւ			
Կէս օր	49	32	
Կ. Պօլս 5 յուլիս.			
Սօսիթէ Ժէնէրայի բաժինը	Անգլ. Լիր.	6	20
« ֆոխանակութեան »		4	40
Կ. Պօլսոյ Պանթալի »		4	46
Քրէտի Ժէնէրայ »		8	18
Քրէտի Օսթրո—Սերբ »			
Երկաթուղեաց հին նոր	Ֆր.	444	
		85	50
Փոխ.	1863	»	314
»	1865	»	316
»	1869	»	268
«	1872	»	84
Թրամուէլ	Օսմ. Լիր	5	55
ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ			
3 ՅՈՒԼԻՍ			
Յնգդ. Ժոնս	Գրամ.	409	30
Դրամ. Ժոնս	»	87	23
Իսթ. Ժոնս	»	89	40
Գրքեր	»	54	22

Հնգ. Գրամ.	»	—
Հնգ. Ժոնս	»	405
Պօլս	»	425

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

Երէկ երեսփոխանական ժողովն ըստ հրաւիրանաց Ամեն. Ս. Պատրիարք հօր դումարեցաւ Ղալաթիոյ եկեղեցին ընդ նախագահութեամբ Ն. Սրբազնութեան :

Ժամ ութին ' ներկայ երեսփոխանաց թիւը 50ի հասած էր , բայց նախընթաց թուով ընտրուած երեք ատենապետաց ' և ոչ մին ներկայ ըլլալով , ոմանք Միսաքեան խաչատուր Էֆենտիին առաջարկեցին շատենապետի պաշտօն վարել , առանց խորհուրդ թէ այն անձն իր կենաց մէջ առաջին կամ երկրորդ անգամ էր որ ընդհանուր ժողովին կրնեիր կայանար , ուստի և ըսաւ ծանօթութիւն չուէր դիւանին վրայ դառնաւ խընդրոց և ոչ ատենական անգիր կանոնաց և սովորութեանց , ինչպէս որ փորձով ալ տեսնուեցաւ :

Ատեան բանալու և կրօնական ժողովը ընտրութեան ձեռնարկելու համար 54 երեսփոխանաց ներկայութիւնն հարկ էր , սակայն դիւանը ' հրաժարեալ բայց հրաժարականին դեռ չընդունուած երեսփոխանները վար երթալով ներկայից 50 թիւը մեծամասնութիւն համարեց և այսպէս ատեան բացուեցաւ :

Նոյն միջոցին ներկայ դռնուող մեծախուռն ժողովրդոց մէջէն աղաղակի ձայներ լսուելով , խմացանք որ փափաղեան Սաեփան Էֆենտիին ատենապետ ընտրուելուն դէմ բողոք մը տուեր են , և այն բողոքին նկատողութեան առնուելը կ'աւանջանջէին :

Ս. Պատրիարքն աղաքարեց դռնուներուն , որ իրենց բողոքադիրը դիւանին յանձնուելով խնդրոց կարգը պիտի անցնի . ուստի ձայն հանելու և աղաղակ բառնալու իրաւունք չունէին : Բողոքողը չհամարուեցան Ս. Պատրիարքին այս աղաքարութեան , և նորէն աղաղակ վերցուցին դռնուով թէ իրենց այս բողոքն ալ ասկէ առաջ տրուած բողոքոց և ամբաստանական հանրագրութեանց պէս պիտի արհամարհուի և մէկդի նետուի . ուստի անպատճառ փափաղեան Էֆենտիին ժողովէն դուրս հանուելը կը պահանջէին :

Ս. Պատրիարքը նորէն լռութեան և հանդարտութեան հրաւիրեց աղաղակողները , խմացնելով որ այս ընթացքին նոյն իսկ Սահմանադրութիւնը հարուածել և վտանգի մէջ ձգել էր , և այն : Պահ մը լռութիւն տիրելով , իսկեկեան Էֆենտի խօսք ուղեց , և ըսաւ թէ ժողովրդեան այսպէս աղաղակ և գոչիւն հանելով ընդհ. ժողովէն պահանջումներ ընելն անպատեհ և աններելի էր , բայց միանգամայն ժողովին ալ պարաքն էր ժողովրդեան բողոքներն ու հանրագրութիւնները ' արդար կամ անարդար ' նկատողութեան առնուել , խնդրոց կարգն անցունել , քննել և արժան եղած պատասխանը տալը Այս խօսքերուն բազմութիւնը ծափահարեց , բայց իսկեկեան Էֆենտիին բողոք այս ծափահարութեան դէմ :

Առժամանակեայ ատենապետն իսկեկեան Էֆենտիին դիտողութեան պատասխանելու ըսաւ թէ դիւանը ժողովրդեան կողմէ բողոք մը տրուած ըլլալը չգիտեր , ինքը միայն (իսկեկեան Էֆենտիին) գիտէ եղեր , և այն : իսկեկեան Էֆենտիին բողոք այս խօսքին դէմ , և պահանջեց որ կամականաւ դիտեցաւ ըլլալը հաստատէ , կամ ըսած խօսքը յետս կոչէ :

Միւս կողմէ ժողովրդեան մէջ ժը-

ՀԱՏՈՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԱՂԱՍԼԻ ' Ի ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԻ ԹԱՊԷՐԻԻ .
(Գաւ. Գե. Բէ. 4552)

« Անոնք որ այս պայմանը կրնուին , դըլխազարկէ ազատ պիտի մնան , և դըլխազարկին փոխարէն զինուորական ծառայութիւն պիտի ընեն : Սակայն անոնք ' որ իրենց տունը մնալ կուզեն , նոյն դըլխազարկը պիտի վճարեն ' ինչ որ Ատրպատականի բնակիչները կը վճարեն , միանգամայն ուղեցոյցի պաշտօն պիտի կատարեն և ուղեւորներն օր մ' և գիշեր մը տուններին հիւրընկալեն :

«Ապաւրտահանն որդի Բէպիւց և Սէլման որդի Բէպիւցի վրայ են » :

Յետոյ Սիւրաքա ' Պոլսէ յիւր , Հապիւլը , Հուծէյֆան և Սէլմանը Հոյաստանի շրջակայ լեռները զրկեց , այսինքն Պոլսէ յիւր դէպ ' Սօգան , Հապիւլը դէպ ' ի Թիֆլիզ , Հուծէյֆան դէպ ' ի Սլաւնաց լեռները , և Սէլմանն ուրիշ կողմ : Սիւրաքա իր արդէն ըրած արշաւանայ վրայ տեղեկագիր մը զըրկեց Էսփէր ամիրայեանին : Երբոր Ամիրայեան այս լուրերն առաւ , շատ ուրախ եղաւ , որովհետեւ մինչև հիմա ոչ մէկ արշաւանք այսչափ շուտով և այսչափ գոհացուցիչ կերպիւ դուրս եկած չէր :

Արդարեւ Պարսկաստանի բնակիչներն այս դործերը տեսնելով , պատերազմէին հրաժարեցան և խաղաղութեան իրաւասութիւնն ընդունեցին :

Այն ժամանակ Սիւրաքա մեռաւ և տեղը Բէպիւլայի որդի Ապաւրտահանի գրուեցաւ :

Սիւրաքայի կողմէ այլ և այլ կողմից զօրաւորները բնաւ աշխարհակալութիւն չըրին բայ ' ի Պոլսէ յիւրէն ' որ դէպ ' ի Սօգան կը քալէր . որովհետեւ այս երկիրը դըլխազարկ վճարել յանձն չէր առած : Այն ժամանակ հետեւեալ նամակը գրեց անոնց .

«Յանուն Աստուծոյ դիմաճին և ողորմածի Այս

է գաշնագիրն զոր Պոլսէ յիւր որդի Ապաւրտահան ' լեռը նաւաճելէ ետեւ շտապեց Մօգանի բնակիչներուն : Ապահովութիւն իրենց անձին , ընչից , աղաղակեան և օրինաց , այս պայմանաւ որ մէն մի չափահաս մարդ ' մէկ դենար կամ ոսկիի մ'արժէք վճարէ , իսլամներուն առաջնորդութիւն եւ մէկ օր ու մէկ գիշեր հիւրընկալութիւն ընէ : Իրենց կիցից այս պայմաններն ընդունել ' մեր ալ պարտքն է կատարել : Աստուած օգնական ըլլալ մեզ , բայց երբոր այս պայմանները ըստին կամ ներդառնութիւն մ'ընեն , այն ժամանակ ներսում չը պիտի ըլլայ իրենց մինչև որ ներդառնութիւն ընդունելը չպատենեն : Իսկ եթէ չուզեն մատնել , այն ժամանակ վրէժխնդրութիւն պիտի դործածուի իրենց դէմ : Վկայ են Տարաբի որդի Գէմաք , Տիշաւէի որդի Բիպաս և Հութիլի որդի Համաշա Գըրեալ ' ի 21 ամի Հիճրէթի (Փրկչ. 642) » :

Հիճրէթի 22 թուին , երբ Մուալիա Սիւրեյ կուսակալ էր , Հոյաստանի բնակիչները դեռ անհաւատ էին : Այն ժամանակները Մէսէմէի որդի Հապիւլ ' Դարբանտի հրամատար էր և վրաստան կը գտնուէր . Թիֆլիզի և լեռան բնակիչներուն դիր դրեց . յետոյ պատերազմեցաւ անոնց հետ մինչև որ նաւաճեցան և թողութիւն խնդրեցին : Թողութեան փոխանակութիւնէ մ'ետեւ , Հապիւլ հետեւեալ գիրն ուղղեց անոնց .

«Յանուն Աստուծոյ դիմաճին և ողորմածի . առ բնակիչս Թիֆլիզի որ ' ի վրաստան , յերկրին Հօրմիւղի , ողջոյն : Ձեր պատճառաւ դռնութիւն կուսամ Աստուծոյ , սրմէ զատ ուրիշ Աստուած չկայ , որ ձեր պատգամաւորն ինձ հասուց , և իմացայ թէ ինչ գէշ ճանբու մէջ կը գտնուիք : Ասկէց կը հասկնամ որ դուք անշան ժողովուրդ մ'էք , ինչպէս որ մեք ալ էինք ժամանակաւ մինչև որ Աստուած իւր Մուհամմէտ մարգարէին ձեռք մեզ կըրթեց , խաղաղութեամբ ապրուացուց , և մեզ մեր անունը , անարգ ու տգէտ վիճակէն դուրս հանեց : Պատմեցին ինձ նաեւ թէ դուք մեր անեցած ապահովութիւնը փայտելու կը փափաքէր և մեզ

չէք ուզեր մերժել : Մեր հաւատքն ընդունողներուն ձերի որդի Ապաւրտահանը կը զրկեմ որ ծանօթ է ձեզ իբրեւ հմուտ Աստուծային դիտութեան և Ղուրանի ծանօթութեան : Նոյն անձը պիտի բերէ ձեզ իմ նամակս որ ձեզ ապահովութիւն կը շտապէ : Եթէ հաւանութիւն տաք , այն նամակս ձեզ պիտի տայ . իսկ եթէ չտաք , պատերազմի պիտի դամ ' ձեր վրայ . որովհետեւ Աստուած դաւաճանները չսիրեր : »

«Յանուն Աստուծոյ դիմաճին և ողորմածի Այս է գիրն զոր Հապիւլ որդի Մէսէմէի գրեց առ բընակիչս Թիֆլիզի որ ' ի վրաստան , յերկրին Հօրմիւղի : Ապահովութիւն ձեր անձանց , ընչից , վանօրէից , տաճարաց , և աղօթարանաց , այս պայմանաւ որ իւրաքանչիւր ընտանեաց հայր մէկ դենար դըլխազարկ վճարէ : Մեր պարտքն է ձեզ պաշտպանել Աստուծոյ և մեր թշնամեաց դէմ , գիշերը ձեզ հիւրընկալել և այն ուսուցիչները տալ , որք ներեալ են սուրբ գիրքն ընդունողներուն . չարիքը հեռացնել , և այնպիսի ճանքաներու մէջ տանիլ ձեզ , ուր ոչ ոք վնաս կրէ : Եւ եթէ խաղաղութիւնն ընդունիք և մեզ հետ աղօթք և ողորմութիւն ընէք , մեզ եղբայր կըլլաք թէ ' մեր հաւատոյն , թէ ' մեր ընչից և թէ այն ամեն բարեաց մասին զորս Աստուած և իր Մարգարէն խոստացաւ մեզ իր գրքին մէջ : Եթէ չընդունիք զայս , պատերազմ պիտի ընենք ձեզ դէմ , վասն զի Աստուած չսիրեր դաւաճանները :

Վկայք . Ապաւրտահանն որդի խալիսի և Հաւաճ որդի Սիւթի : Գրեաց Բիւհ , Չասուուած և իր հրեշտակները , ընդ նոսին ամեն հաւատացեալները վկայ կը կոչեմ . և Աստուծոյ վկայութիւնը բաւական է » :

* Թապիլիի այս պատմութիւնն ամեն մասամբ համայն չէ Պէլլածօրի պատմութեան . գլխաւորապէս ընթերցողը քանի մը տարբերութիւններ պիտի գտնէ այն դրութեանց մէջ զորս Հապիւլ Թիֆլիզի բնակաց ուղաղած է : Բայց որովհետեւ հիմնական գաղափարներն երկու տարբեր խմբագրութեանց մէջ ալ կը գտնուին , կը հետեւի որ երկու հեղինակներն իրարմէ օրինակած չեն , ուստի և երկուքին ալ պատմութիւնն արժ տեսնուաւ :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

4 Պէշիկիթաշ, Օրթաք, Գուբուշ, Սըհապ, Պէշպէք, Բ. Շահաբ, Էմիրիկ, Սէիք, Թարապ, Պէշիկեքա, Մէղարապ.

11 10 11 30
12 12 5

Այս հանքային ջուրն Եւրոպայի մէջ:



ROGÉ

Tout flacon ne
portant pas ce
cachet imprimé en quatre
couleurs devra être consi-
déré comme ne servant pas
de la fabrique
de l'inventeur.

PARIS

Հիշելու է համար պիտք է գլխել Սի-
սիլիայ Ռեյլեյի բազմաթիվ մոտ կապանի
Լիազոր պրծակատարը
Ս. Ս. ՍՈՒՍՆ, ՍՏԻՍՆ, Ի. ՌԵՆԵ,